

Կյանքի կարուսել

ժամն է փողեր հնչեցնելու, մեր սերունդը վտանգի մեջ է:
Բուլի երևակայությունը դարձել է իրականություն !

Սարսափ

Վերնագրի նպատակը ընթերցողներին զգուշացնելն է, քանի որ շատերը չեն սիրում սարսափել: Մեր սարսափներով (և ոչ միայն) գերազանցում ենք արտասահմանյան սարսափֆիլներ արտադրող “դեղնակտուց” ռեժիսորներին: Չշահագործեմ Ձեր համբերությունը: Պատկերացրեք “մարդը” կեցվածք է ընդունել՝ բոլոր վերջույթները առավելագույնս հեռացված են կենտրոնական մարմնից, ձեռքի մատները՝ ափից, հաստ մատով փակել է մի քթանցքը և մյուս քթանցքով արտաշնչում է ամբողջ ուժով, ինչն ուղեկցվում է հզոր շիթով և աղմուկով: Մի քիչ հանգստացեք, որովհետև հաջորդ քայլը նույնքան սոսկալի է՝ ձեռքը մաքրում է ծառի կամ տաբատի վրա, լավագույն դեպքում նաև “թաշկինակով”, որով մի քիչ առաջ կոշիկներն էր սրբել և... մի քանի րոպե անց ձեռքով բարևում է ծանոթին, ողջագուրվում: Այս տողերը գրելուց հետո մի ամբողջ օր չեմ կարողացել հաց ուտել: Այսինքն եթե այդ *պրոցեսը* ցուցադրեն հեռուստացույցով... պարենային հարցը որոշ չափով կարելի է մեղմել: Շատերին կթվա թե նման հեռուստատեսարաններից մենք շատ հեռու ենք, սակայն մենք այժմ արդե՛ն դիտում ենք առավել այլանդակ հաղորդումներ: Դիտու՞մ եք արդյոք “Կյանքի կարուսելը” հաղորդաշարը, որտեղ որդին սպանում է հորը, հայրը բռնաբարում է որդու կնոջը, մայրը կապված է փեսայի հետ, մյուսը իր ընկերոջ հարսի հետ, ամուսինը ծեծում է կնոջը... բարոյական մարդու համար ինչո՞վ սարսափ չէ: Վերևում նկարագրված *կենդանակերպը* կարող է այսպիսի բաներ չի էլ արել: Այդ սցենարիստին (կարող է մի քանիսն են) կարեկցում են: Երևի միայն այդ է տեսել ու տեսնում, իսկ երևակայությունն անբավարար է “Վասյուկիի” համար: Եթե դա է մեր ներկան, ապա պետք է կոնկրետացնել՝ “*Մեք* կյանքի կարուսելը”, քանզի հաղորդման վերջում էլ խնդրում էին, թե ով որ ունի նման պատմություններ թող ուղարկի մեզ: Հիմա այլևս չեն գրում, ըստ երևույթին, հեռուստադիտողը շատ ակտիվ մասնակցում է այդ գործընթացին գործի դնելով իր ստվերային զգացումները, քանզի այդ պատմությունների վերջը չի երևում: Կարուսելը, ակնհայտ է, չի պտտվում: Սա անբարոյականության խրախճանք է հարկատուների հաշվին, բարձր ռեյտինգ ունեցող Պետական Հ1-ծրագրի եթերում:

Անորակ հաղորդումների ու սերիալների մասին կարելի է սուր հողվածներ գրել, սակայն հուսադրում ես քեզ, որ այդ մղձավանջը վերջ կունենա, իսկ գրելու համար պետք է որոշ ժամանակ հետևել դրանց, ինչը իմ ուժերից վեր է: Բայց “կամքի տեր” մարդիկ դեռ կան, ապա ինչու՞ են լռում: Ըստ երևույթին սա մեր կյանքն է (փրկիր մեզ, Աստված) կամ բոլորս կարուսելում ենք:

Կա՞ արդյոք մշակույթի նախարարություն, ո՞րն է դրա դերը, ո՞ր կողմ է նայում՝ հյուսիս-արևմուտք, թե՞ հարավ-արևելք, չնայած վերջին ուղղության երկրներն էլ արդեն մեզնից զարգացած են: Թե՞ գտնվում է “*Հատակում*”, որտեղից միայն *մեր կյանքի* կարուսելն է երևում (ականջդ կանչի Գորկի, չնայած որ այդ գրվածքից է ծնվել թևավոր խոսքը՝ “Человек - это звучит гордо”):

Եվ սա կարող է շարունակվել... քանի դեռ ունենք շան անուն հիշեցնող մականուններով “աստղեր”, քանի դեռ “կայացածները” իրենց հետևից բեմ են քարշ տալիս անտաղանդներին, քանի դեռ խաղում ենք “Ի՞նչ, ո՞րտեղ, ե՞րբ”, նմանակելով հաղորդավարից մինչև հավաքարար, առանց “ավելորդ” (այսինքն՝ հայերեն, թող ների ինձ Աստված) խոսքի, քանի դեռ այլանդակ ձևերով նմանակում ենք ռուսական հեռուստահաղորդումները: Ի դեպ սրանք կարդացե՛լ են Պյեր Բուլի “Կապիկների մոլորակը” կամ դիտել ֆիլմը (Շեֆներ): Այնտեղ այսպիսի միտք կա՝ թե ինչու՞ կապիկները մոտ 3000 տարի գրավել են իշխանությունը, բայց *կապկային* հասարակությունը նույն մակարդակի վրա է մնացել: Որովհետև կապիկները միայն կապկում են, ի՞նչ զարգացման մասին է խոսքը:

Ափսոս, որ կապիկները միայն կապկում են:

Ռուդոլֆ Հակոբյան, դոցենտ

Հեռ.՝ 091.70.52.26, քաղ.՝ 23.02.59: rune39@mail.ru